

ՍԵԿԵԱՅ^{*)}

(Լեզենդ)

I.

«Ա՛խ իմ անուշ, իմ աննման, իմ սիրելիս գեղեցիկ,
Ես գերի եմ, ծեռքդ եմ ընկել, ես չոքել եմ քեզ մօտիկ,
Դու իմ հոգուս սրբութիւնն ես—աստղերից էլ է՛լ իստակ,
Դու իմ սրտիս տաք մուրազն ես, իմ հուրին ես, իմ
հրեշտակ...»

—
«Ա՛խ իմ անուշ, իմ աննման, իմ գեղեցիկ նազելիս,
Ազրու-Մազդէն, լոյս-Աստուածը թող չատեղծէր անբաղդիս,
Դու իմ հոգիս կաշկանդել ես, սիրոյդ կապով պինդ կապել,
Ես քո քուրմը, դու իմ տաճար, դու ինձ մի կուտք ես
դարձել...»

—
«Ա՛խ, Երրազի քափուր, ալ վարդ, սիրելուս պէս հոտով չես,
Ա՛խ, Բուշիրի անուշ քամի՝ նազելուս պէս քնքուշ չես,
Փարսիստանի ողջ աղջիկներ, ձեզ չեմ փոխիլ մէկի հետ,
Կարմիր նուռը, դալամ ունքեր ես չեմ փոխիլ ողջիդ հետ...»

II.

Մթնշաղ է. հարհանդ, մարմանդ ծառ ու ծաղիկ ննջում են.
Տաք գիշերը վրայ կուգայ. հով ու զովեր ննջում են.
Ջուհար աստղեր, սմբուլ ու սէզ դուրան դաշտում ննջում են.
Դադրած ոտներ, մաշուած սրտեր հարհանդ մարմանդ նրն-
ջում են...

*) «Սեկեաճ»-ը մի տիւրք է գեղեցիկ պարսկական եղանակ է, որի հե-
ղինակը ըստ աւանդութեան միայն այդ երգն է երգել է երգելուց յետոյ մե-
ռել է...

Վառ աշուղը—պարսիկ երգիչ հարհանդամարմանդ չի
ննջում.

Դառն աշուղը սրտի բոցից անդորը, անխօս չի ննջում,
Հայ տէրտէրի ջան աղջիկը, հայ աղջիկը աննման,
Զիւ վառել է, զիւ դաղել է երգչի սիրտը աննման...

III

Ա՛խ, իմ անուշ, իմ աննման, իմ նազելիս գեղեցիկ,
Դու ի՞նչ կուգես, որ ես լինիմ, դու ի՞նչ կուգես, գեղեցիկ.
Խորասանու կապերտ լինիմ, փռուած լինիմ քո առաջ,
Բիրիջանու քրքում դառնամ, փաթթեմ քո լանջ, քո առաջ...

Ա՛խ, իմ անուշ, իմ աննման, իմ գեղեցիկ նազելիս,
Դու ի՞նչ կուգես, երկինք դառնամ, փէրուգ-երկինք քեզ
համար,—

Առաւօտուն գիւլի-սապահն հէնց որ բացուի հրաշալի
Հրեշտակային շնչով բանամ թարթիչներդ բոցավառ...

«Զո քաթիպէն ջուհարագարդ վերելից վար կոճկուն են,
Սիրտս է դաղում, ա՛խ, նախշուն ջա՛ն, կոճակներդ հմա-
յուն են,
Ա՛խ, չի բացուիլ կուրծքդ ինձ համար, ա՛խ չի բացուիլ,
չի՛ բացուի,
Բայց կը երգեմ, մինչեւ որ նա սիրուս առաջ բաց-բացուի...»

IV

Եւ երգիչը չոնգուրն առած՝ լիք տաք խանդով, եռանդով,
Դեշտ-ճեֆիրի օդի նման՝ թէժ ու եռուն աւիւնով,
Սիրականի առջեւ չորած երգ է երգում աննման,
Մինչեւ քանդուին հայ աղջկայ կոճակները աննման...

Ա՛խ իմ անուշ, իմ աննման, իմ նազելիս գեղեցիկ,
Յաւիս ուժին չեմ դիմանալ, սիրտս է կծկում, գեղեցիկ.
Դու չե՞ս կարող պատռել շորդ, կոճակներդ պոկալովել,
Դու չե՞ս կարող սիրտս բուժել, դու չե՞ս կարող ինձ սիրել.

«Զէ՛ որ մեղք եմ, չէ՛ որ այսպէս կը նուաղիմ, կը մեռնիմ,
Ծուն ու գայլեր ինձ կը պատռեն, հողոց-մոխրոց կը լինիմ,

Ձէ՞ որ որը եմ, անտիրական, իմ ընկերս է շոնգուրը,
Երբ որ մնոայ, նա կը լոէ,—սեւ կը շարուի իմ դուռը...

«Ա՛խ աննման իմ նազելիս, իմ սիրելի սիրելեան,
Սիրտս ելաւ, էլ չեմ գտալիլ լացս, ողբս աննման...»
Եւ հեկեկաց դառն-դառն... եւ քացուեցան կոճակներ,
Ապա իսկոյն կոճակները կոճկուեցան վարից-վեր...

V

Դառն գայրոյթ, ծովի չափ կիրք, բովի պէս խանդ բռնկեց,
Եւ երգիչը ելաւ տեղից, ցատկեց որպէս մի յովազ,
Ամպ որոտի նման գոռաց, կայծակի պէս փայլակտեց,
Դիմավէնդի հեղեղի պէս, փոթորկի պէս վազէվազ...

«Մեծ աստուածներ—գօրեղ բաջեր, գիւ հերոսներ ճար
արէք,
Դուրան դաշտի, վեր սարերի հաւքեր-աւքեր ճար արէք,
Երկնուց վրայ պէծ-կէծող աստղեր—նաշխեր ինձ հասէք,
Զիւ փոթորիկ, բուք ու բորան ցալիս, եարիս դեղ արէ՛ք:

«Մեծ աշխարհի ուժեղ մարդիկ, գոռ աշխարհի հզօրներ,
Անապատի հուժկու վազր, կածանների զազաններ,
Որջերի մէջ խորը թմրած՝ անասուններ. գօրեղներ,
Գազան ծովեր, վզզան հովեր իմ խորեարիս ճար արէ՛ք...»

Հանց թէժ կրակ, հանց փոթորիկ վառ երգիչն է բոր-
բորուած,
Եուրբ լարերին, նուրբ թելերին նա զարկում է զայրացած,
«Ա՛խ անուշիկ իմ սիրելիս, ա՛խ սիրելի սիրական,
Երգիս վերջն է, ուժ չմնաց, կոճակներդ չքացուան....

Եւ լարերը կտրուեցին, երգը մարա՛ւ ու լոնց,
Եւ երգիչը իւր նազելու ոտերի տակ գլորուեց...